Արձանագրություն 3

«ԳՀԾՁԲ-ԱԾ-ՁԻԱՀ-18/2» ծածկագրով գնանշման հարցման ձևով
աուդիտորական ծառայությունների ձեռքբերման գնման
ընթացակարգի հայտերի գնահատման
արդյունքների հաստատման նիստի

Անցկացման վայրը՝ ք.Երևան, Աճառյան 2, «ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ, 2-րդ հարկ, 207 սենյակ
Անցկացման օրը՝ 10 հունվարի 2019թ.
Անցկացման ժամը՝ 15:00
Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝	Եվգենյա Մխչյան
Հանձնաժողովի անդամներ՝	Արշակ Պապոյան
	Տիգրան Հովսեփյան
	Գևորգ Խանոյան
	Մերի Մարկոսյան
Հանձնաժողովի քարտուղար՝	Սոֆիա Գրիգորյան

I. Առաջին տեղը զբաղեցրած մասնակիցների կողմից ներկայացված փաստաթղթերի գնահատման մասին

(նախագահ՝ Եվգենյա Մխչյան)

Ընդունել ի գիտություն, որ

1.1 ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե առաջին տեղն զբաղեցրած մասնակիցների՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ հարցում ուղարկելուց հետո սահմանված ժամկետում (09.01.2019թ.) ստացել ենք եզրակացություն, համաձայն որի մասնակիցը՝ «Էյվիսի քոնսալթինգ ընդ աուդիտ» ՍՊԸ-ն չունի ժամկետանց հարկային պարտավորություններ և մասնակցի կողմից ներկայացրած հայտարարությունը համարվում է իրականությանը համապատասխանող:

1.2 Հիմք ընդունելով հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված առաջին տեղը զբաղեցրած մասնակցի ներկայացված փաստաթղթերի գնահատման թերթիկները, համակարգողն ամփոփեց ընթացակարգի մասնակցի հայտի գնահատման արդյունքները, ինչն արտացոլված է ստորև ներկայացված աղյուսակում.

N h/h	Գնահատման չափանիշը	Գնահատման արդյունքը
		«Էյվիսի քոնսալթինգ ընդ աուդիտ» ՍՊԸ
1.	Որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթեր	համապատասխանում է
Ընդհանուր գնահատականը		**համապատասխանում է**

Հանձնաժողովը որոշեց.

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի պահանջների համաձայն, «Էյվիսի քոնսալթինգ ընդ աուդիտ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը գնահատել բավարար և առաջին տեղ զբաղեցրած մասնակցին հայտարարել ընտրված մասնակից՝ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով.

- N 1 չափաբաժնի համար «Էյվիսի քոնսալթինգ ընդ աուդիտ» ՍՊԸ-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

II. Հայտարարություն պայմանագիր կնքելու որոշման մասին

(նախագահ՝ Եվգենյա Մխչյան)

2.1 Հանձնաժողովը որոշեց.

ա) ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքել Օրենքի 10-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետի ավարտից հետո: «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ անգործության ժամկետ է սահմանվում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը էլեկտրոնային ձևով գնումների գործընթացի բոլոր մասնակիցներին ուղարկելու օրվան հաջորդող օրվանից մինչև 5-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը (11.01.19թ. մինչև 15.01.19թ.):

բ) հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

Նիստին ներկա հանձնաժողովի անդամների անունները, ազգանունները և ստորագրությունները

Հանձնաժողովի նախագահ՝	Եվ.Մխչյան	(ստորագրություն)
Հանձնաժողովի անդամներ՝	Ա.Պապոյան	(ստորագրություն)
	Տ.Հովսեփյան	(ստորագրություն)
	Գ.Խանոյան	(ստորագրություն)
	Մ.Մարկոսյան	(ստորագրություն)
Հանձնաժողովի քարտուղար՝	Ս.Գրիգորյան	(ստորագրություն)